Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
U-66

ՅՈՎՍԿԻՄ ՍՍԼՕՎԵԱՆ

ՂՕՆԱՂԼՈՒՂՍ ՄՆԱՑ

ՎՕԴԷՎԻԼ ՄԻԿ ԵՐԵՐՈՒԵԹՈՎ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՈՍՏԻՆԵԱՆՑԻ
1904

12 MAR 2011
891.99
U-66

ՅՈՎԱԿԻՄ ՍՍԼՕՎԵԱՆ

ՂՕՆԱՂԼՈՒՂՍ ՄՆԱՑ

ՎՕԴԵՎԻԼ՝ ՄԷԿ ԵՐԵՐՈՒԵԹՈՎ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐՈՒՍԻՆ
Հ. Հ.
ԳԱԴԱՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

РЕДАКЦІЯ ГАЗЕТЫ „ЛИЛЕЪ"
ТИФЛИСЪ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՍԻՆԵԱՆՑԻ
1904

55643

01.06.2013

Дозволено цензурою. Тифлисъ, 3 мая 1904 г.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ԻՍԱՅ ԵԱԿՈՒԼԻՉ ԿԱՐԿԱՏԱՆԵԱՆ, *մանրավաճառ, 50 տարեկան*—Գ. ՄԵԼԻՔԵԱՆ.

ՕԿՍԻՆԱ ԲՕՂԴԱՆՈՎՆԱ, *նրա կ. նը, 35 տարեկան*—Ա. ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆ.

ՄԱՇԱ, *Կարկատանեանի աղջիկը, 16 տարեկ.*—Ե. ՆԱԽՍԻԳԵԱՆ.

ԴԱՆՈՒՇ, *մատռուակ, 50 տարեկան*—Ն. ՍՕՐՕԼԵԱՆ.

Գործն անցնում է մի դաւառական քաղաքում Իսայ Եակուլիչի տանը։

Առաջին անգամ ներկայացրած է Աստրախանում 1894 թ. մարտի 20-ին բարեգործական նպատակով։

Къ представленію дозволено 8 марта 1894 г. № 1435

ՂՕՆԱՂԼՈՒՂՍ ՄՆԱՑ

ՎՕԴԸՎԻԼ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Բեմը ներկայացնում է հասարակ սենեակ, մէջ տեղում եւ երկու կողքում դռներ. աջում (ժողովրդի կողմից) մի հասարակ սեղան. ձախ կողմում աթոռներ, պատից կախած է մի հնամաշ պատկեր, որի վրայ նկարած է, ինչպէս Աբրահամը զոհում է Իսահակին. Երեկոյ է.

ՏԵՍԻԼ Ա.

ԻՍԱՑ ԵԱԿՈՒԼԻՉ (*մանելով մէջ տեղի դռնից, ցած է դնում գլխարկը եւ ձեռնափայտը*)։ Ո՛ւֆ, վերջապէս հասայ... Ա՜յ ճանապարհ, Աստուած փչացնի, գալիս ես, գալիս՝ վերջ չկայ։ (*մտենալով սեղանին, ցած դնելով քանալիքը, որ փաթաթած է մի տոպրակի մէջ, նստում է*)։ Է՛հ, կեա՜նք է էլի, տանջվիր, հա տանջվիր՝ առաւօտը վեր կայ շուտով, շտապ թէյ խմիր, և, գլուխդ ճղած, վազիր դուքան, ինչ է մի երկու շահի պէտք է փող

աշխատենք։ Բաներն էլ խո՞ հիմա Աստծուն է յայտնի։ Ա՛յ, հենց էսօր առաւօտից մինչեւ իրիկուն ոտի վրա եմ եղել, դուք մի ասէք թէ ինչ եմ արել, ինչ եմ աշխատել—մուտք է եղել՝ 10 մանէթ 21 կոպէկ։ Հիմա համեցէք էդ փողի աշխատանքով դուքանի քրեհ տուր և տուն պահիր։ Է՛հ, որտե՞ղ են հին տարիները. ողորմած հոգի հայրս պատմում էր՝ մեծ խօլերի տարին ինչ էժան դուքաններ էին տալիս... Հեռուն ինչ եմ գնում, շատ տարվայ բան չէ իմ աչքի տեսածը՝ 20 տարվայ բան կլինի՝ էս դուքանը, որ հիմա ձեռքիս է, արժէր տարէնը 50 մանէթ, բայց էսօրուան օրը տալիս եմ 200 արծաթ։ Է՛հ, հէ՞... (*հառաչում է*) փող աշխատելու տարիները հին տարիներն էին—հիմա ջուրը ջրից հանես, երկու ձեռքով փառք տուր։ Երանի՞, մուշտարին որ գալիս էր, ապրանքը շաբարի պէս էինք ծախում, բայց հիմա՝ տասը տեղ մտնում է, դուրս է գալիս, ասա թէ մի տեղից մի բան է առնում։ Մենք էլ վատ ե՞նք. քանի, քանի անգամ եմ աւել՝ եկէք, խօսք կապենք, մի գնից ցած չգանք,—չէ՞ ու չէ՞, ում ես ասում - յիմարները դեռ վրաս ծիծաղում են։ Մանաւանդ էն անիծած Վարթաշը, Աստո՞ւած ազատի, բազարաւորները ձեռքից էրված են, հենց որ տեսնի մինն եկաւ մօտդ, խկոյն աչքերը

շորս արած, ազռաւի պէս, սպասում է՝ որ կանչի իր խանութը։ Համեցէ՞ք, էսքան տանջանքը տար և թիք ու մուր լսիր։ Տունդ էլ կարդին լինի էլ ինչ հոգս. ամեն իրիկուն գըլխիդ մի բան բերում են, ամեն օր վայ են տալիս՝ էս չկայ, էն չկայ, էս բանն առ, էն բանը բեր, հասած աղջիկ ունիս, պէտք կգայ—որ մինը ասեմ։ Հասած աղջիկ ունենալն էլ մի կրակ... Է՛հ, մի խօսքով շարշարվիր ու շարշարվիր։ Ա՛յ, հիմա էլ կէս ժամ է, որ եկել եմ, մարդ չկայ, տեսնես որ ծակն են մտել... Մաշա՛, Մաշա՛...

ՏԵՍԻԼ Բ.

ԻՍԱՑ ԵԱԿՈՒԼԻՉ ԵՒ ՄԱՇԱ

ՄԱՇԱ (*Նազով ներս է մտնում ձախ կողմից*). Ի՞նչ է, հայրիկ։

ԻՍԱՑ. Որտեղ էր, երկու ժամ է որ եկել եմ, մարդ չկայ։

ՄԱՇԱ. Ես ձեր գալը տեսայ. հայրիկ. ինչ էր ասում։

ԻՍԱՑ. Մայրիկդ որտեղ է.

ՄԱՇԱ. Նա հենց հիմա կգայ, գնացել է Ալիզայենց...

ԻՍԱՑ (*ընդհատելով*). Լիզայենց. այ-ջուր կծեծեն հա...

ՄԱՀԱ. Ո՛չ, հայրիկ,—Լիզան նոր կապայ է կարել, մայրիկին կանչեց, որ ցոյց տայ։

ԻՍԱՑ. Համեցէք, ստացէք։ Բայց այդքան ժամանակ ես տասը կապայ կտեսնէի։

ՄԱՀԱ. Պէտք է ուրիշ բանի վրա էր խօսէր...

ԻՍԱՑ. Իմանում եմ, իմանում—էն որ Լիզան է, բան կգտնի խօսելու։

ՄԱՀԱ. Սա հարկաւոր բան է, հայրիկ։

ԻՍԱՑ (*զարմացած*). Հարկաւոր. ինչ բան է։

ՄԱՀԱ. Այս շաբաթ մայրիկը ուզում է նորահարսներ կանչել, գնաց որ այդ մասին խորհուրդ անէ...

ԻՍԱՑ. Հա, էս էր պակաս։ Չէ, քանի վաղօրօք է, պէտք է ես էս բակից դուրս գամ, թէ չէ էս Լիզան շուտով իմ տունս տակն ու վրա կանի։

ՄԱՀԱ. Այսօր նա մուրաբայ էլ է եփել, մայրիկը պէտք է հարցնէ, թէ բալը քանով է առել...

ԻՍԱՑ. Էդ քանի բան ասացիր՝ կապայ, բալ, նորահարսներ...

ՄԱՀԱ (*վստահ*)։ Այո, հայրիկ—մայրիկը ուզում է այս շաբաթ զօնաղլուղ անել, մուրաբաներ չունինք, գնաց որ հարցնէ բալը քա-

նի է... Ուզում էք ես գնամ կանչեմ... (*գնում է մէջ տեղի դռնից*)։

ՏԵՍԻԼ Գ.

ԻՍԱՑ ԵԱԿՈՒԼԻՉ (*մենակ*). Հասայի. ես չեմ իմանում. փառք Աստուծոյ, 18 տարի է, որ պսակված եմ, կնկաս էսպէս էլ, էնպէս էլ եմ ճանաչում (*ձեռքի դաստակի երկու կողմն է ցոյց տալիս*). իր խելքից մի բան չի անիլ, մէկը կողքից տըզզի՝ թէ էս է պէտք—վերջացաւ,—խակոյն գլուխը ճղած՝ էն բանը կուզի անել։ Հիմա էդ Լիզան էլ որ էս տեղ է, գնա՞յ ու գնա՞յ... Էդ անիծածը իմ խելօք կնկան ինչպէս ուզում է՝ պտտեցնում է, ինչ սաղով ուզում է՝ պարացնում է։ Հիմա անպատճառ մի նոր բանով կգայ։ Քանի անգամ եմ ասել, ձեռ քաշիր էդ յիմար սովորութիւններից, դա մեր բանը չէ, մենք չենք կարող հարուստների հետ ոտ ձգել։ Ում ես ասում—էս պատին ասես (*ցոյց տալով*) իմ կնկան ասես, մի և նոյն է... (*նմանեցնում է կնոջը*)։ «Ինչպէ՞ս կարելի է, Լիզան էդպէս ասաց, Թաքուշն էդպէս խորհուրդ տուաւ»... (*մատը ճակատին տանելով, իւր ձայնով*)։ Չկայ... չկայ... մի մարդ պէտք է խելք ունենայ, խօսք

լսէ, թէ չէ Ալիի մկրատի նման հակառակելով բան չի դուրս գալ։

ՏԵՍԻԼ Դ.

ԻՍԱՑ ԵԱԿՈՒԼԻՉ, ՕԿՍԻՆԱ ԲՕՂԴԱՆՈՎՆԱ և ԱՆՆԱ

ՕԿՍԻՆԱ *(ետեմի ետեւից)*. Սա ինչպէս եկաւ, որ չտեսայ...

ԻՍԱՑ. Հը՛, դալիս է։ *(Սկսում է հաշիւները նայել)*։

ՕԿՍԻՆԱ *(մտնելով Մաշայի հետ մէջ տեղի դռնից)*։ Բարի իրիկուն, Իսայ Եակուլիչ, սա ինչպէս ես եկել, որ չեմ տեսել։ *(Մաշան անխօս անցնում է իր սենեակը)*։

ԻՍԱՑ. Էնպէս բանով ես զբաղուած, որ տեսնես։

ՕԿՍԻՆԱ. Լիզայենց տանն էի. չեմ տեսել անցնելդ։

ԻՍԱՑ *(քիչ վրդովվելով)*. Դու և Լիզան որ պատահաք, Աստուած ազատի՜... Ա՛յ, տուած ու առած կլինիք հա՜...

ՕԿՍԻՆԱ. Ծիծաղիր, հա, ծիծաղիր...

ԻՍԱՑ. Երանի քեզ, որ ոչ խելք ունիս, ոչ դարդ։ *(Ման է զալիս)*։ Թէյը պատրաստ է։ Աղջիկը ո՞րտեղ է։

ՕԿՍԻՆԱ. Էլ մի հարցրու...

ԻՍԱՑ. Էլի գնացել է։

ՕԿՍԻՆԱ. Իրիկվայ զանգը չտված հարցրեց մի կէս ժամով և մինչև հիմա չի եկել։ Աստուած իմ արիւն խմող թշնամուս չգցէ դրանց ձեռքը։

ԻՍԱՑ *(կողմը)*։ Քոնն էլ նոյնպէս *(իրան)*։ Գնա, տես, կարելի է որ եկել է, ասիր թէյ պատրաստի։

ՕԿՍԻՆԱ. Մաշա՛, Մաշա՛, տես՝ աղջիկը եկել է, ինքնաեռը դրել է։

ՄԱՇԱ *(ետեմի ետեւից)*։ Ո՛չ, մայրիկ։

ԻՍԱՑ. Ուրեմն էս իրիկուն թէյ չենք խմելու։

ՕԿՍԻՆԱ. Լաւ, կգայ, կսարքի, ինչ ես շտապում։

ԻՍԱՑ. Իսկ եթէ չգա՞յ...

ՕԿՍԻՆԱ. Ինչպէս անենք—ես իսօ չեմ գնալ, չեմ սարքիլ *(մեղմ, ինքշաքար)*։ Իսայ Եակուլիչ...

ԻՍԱՑ *(ընդհատելով)*. Հէ՛, էլի ինչ փորացաւ ունես։ Կապաղ իսօ տուել ես կարելու։

ՕԿՍԻՆԱ. Էս չէ...

ԻՍԱՑ. Էլի ինչ է, Լիզայի հետ տեսնվել ես, առանց էն չէ, մի բան հնարած կլինիք։

ՕԿՍԻՆԱ. Չէ, սա ուրիշ բան է։

ԻՍԱՑ. Ինչ պէտք է լինի, կապայ չէ,

շլեապա կլինի, շլեապա չէ, մուռաբայ կլինի...

ՕԿՍԻՆԱ (ուրախ). Հա, հա, որտեղից իմացար։

ԻՍԱՑ. Ես չեմ իմանում։

ՕԿՍԻՆԱ. Ճշմարիտ, մուռաբաներս էնպէս են պրծել, որ ոչ գդալի և ոչ շանգալի ունենք — պէտք է եփենք։ Դու լաւ կանես, որ առաւօտը շուտով վեր կենաս և գնաս բազար, լաւ մուռաբացուներ առնես. հիմա բալի, կեռասի լաւ ժամանակն է։

ԻՍԱՑ. Հեռ վեր առ, ի սէր Աստուծոյ, քո մուռաբայով։

ՕԿՍԻՆԱ. Ինչ ես ասում, խելքդ վրէդ է. հիմա որ չեփենք, ե՞րբ ենք եփելու...

ԻՍԱՑ. Հ'եփես, չի լինիր։

ՕԿՍԻՆԱ. Էլի սկսեցիր խօսել. հասած աղջիկդ տանդ, ասում ես մի եփիր՝ ինչ կարող ես, իմանաս ինչ կլինի...

ԻՍԱՑ. Դու ասա լինի, էն ժամանակ ես իմանում եմ, որտեղից գտնեմ, — պատրաստը կառնեմ։

ՕԿՍԻՆԱ (Ներքանաչով). Սա ինչ բոշայի բան է, մուռաբայ եփել չեմ իմանում, որ փող տամ, բազարից պատրաստը առնեմ։ Ծիծաղել եմ, հիմա գլխիս է գալիս։ Հէ, ես բազարից պատրաստի մուռաբայ չեմ առնիլ։

ԻՍԱՑ. Ես էգուց պէտք է մի քիչ հանգստանամ, շուտ չեմ կարող վեր կենալ։

ՕԿՍԻՆԱ. Ես քեզ ասում եմ, որ չի լինիր. էս շաբաթ ուզում եմ Ծածինին նորահարս կանչեմ, մուռաբայ չունեմ։

ԻՍԱՑ (վեր թռնելով). Ի՞նչ, նորահարս, տեղումդ ծանր նստիր։

ՕԿՍԻՆԱ. Ինչ խելքի մարդ ես, երկու տարի է, որ ղօնաղլուղ չեմ արել, հիմա էլ չորս նորահարս են հաւաքուել։ Էդպէս չի կարելի, տեղը գնում ենք, պէտք է կանչենք։

ԻՍԱՑ (զարմացած). Որտե՞ղ եմ գնում, ինչ ես դուրս տալիս...

ՕԿՍԻՆԱ. Ինչպէս թէ որտեղ։ Ծածինենց չգնացի՞, Անեսկը, Մաշօկը, հա, ինչպէս է նա՝ Եղուշը, Լիսօկը, Սօնիշը չկանչեցին։ Ողջ տեղը գնացել ենք, հիմա ինչպէս չասենք։ Ես էլի չիմանալի կգնէի, եթէ նորահարսներ չլինէին։ Հարսանիքը մի հոգու տեղ երեք հոգի ենք գնացել։ Էդպէս շատ խօսում ես, այսուհետև ոչ մի տեղ չեմ գնալ. էս անգամ կանչեմ՝ տակից դուրս գամ, պարտաս տամ, էլ ոչ մի տեղ ոտ դնելու չեմ։

ԻՍԱՑ. Լաւ, յետոյ կանչես չի՞ լինիր։

ՕԿՍԻՆԱ. Յետոյ Գայիշը երեխայ կբերի, գալ չի կարող։

ԻՍԱՑ. Հօրս ոտի տակ, ինչքան հոգս։

ՕԿՍԻՆԱ. Քո հոգսը չէ, բայց ես չեմ կարող չկանչեմ։

ԻՍԱՑ (անհամբեր). Տէր Աստուած, ձեռք չի վեր առնում էլի։ (Դուրս է գալիս Մաշան գիրքը ձեռին եւ նստում է)։

ՕԿՍԻՆԱ. Լաւ, լաւ. ինչ ես նեղանում, նստիր մի օրինաւոր կերպով լսիր, թէ ինչ եմ ասում։

ԻՍԱՑ. Լսել չեմ ուզում։

ՄԱՉԱ. Մայրիկ, նորահարս կկանչէք, ես գուլպայ և մաշիկ չունեմ։

ՕԿՍԻՆԱ. Լաւ, եօլա կգնաս։

ԻՍԱՑ (նեղացած). Էլի ինչ չունես, մաշիկ նոր եմ խօ՞ առել։

ՄԱՉԱ. Այն մաշիկով, հայրիկ, մարդու մէջ դուրս գալ չեմ կարող։

ԻՍԱՑ. Ինչու չես կարող, Փոխփառանի աղջիկն ես ինչ է։

ՄԱՉԱ. Նա ձմեռվայ մաշիկ է. հիմա հարկաւոր են ամառվայ, բայց երեսով, թեթև մաշիկներ։

ԻՍԱՑ. Ձեզ շատ բան է պէտք. ես ձեզ եմ տեսնում, դուք մայր ու աղջիկ ինձ ուզում էք առանց շապիկ թողնէք։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ ԵՒ ԴԱՆՈՒՇ

ԴԱՆՈՒՇ (արբած, բայց աշխատում է իրեն զգաստ պահել. շուտ շուտ ձեռը տանում է գլխին, կոկ իւղոտած գլուխը շոյելու համար. երեւում է դռան մէջ, քաշքշվելով)։ Տանն էք, կարելի է...

ԻՍԱՑ (տեսնելով Դանուշին, զարմացած եւ քարկանալով). Դանուշ... ինչի համար։

ՕԿՍԻՆԱ. Ասում եմ, ուզում եմ հինգշաբթի օրը նորահարսներ կանչել—չես լսում, ինչ անեմ։

ԻՍԱՑ. Տէր Աստուած, դու ինձ համբերութիւն տաս, նահլաթ չար սատանին... (քարկանալով)։ Ես ասում եմ, նորահարսներ չեմ կանչիլ, թող էդ զօնաղլուզդ։ (Ակնարկելով Դանուշին). Սրան հենց հիմա դուրս կանեմ։

ԴԱՆՈՒՇ (մօտենալով). Հրամայել էիք գալու։

ՕԿՍԻՆԱ. Հա, հա, եկ, եկ...

ԻՍԱՑ (կողմը). Զոր ու ցաւ, գրողը տանի երեսդ։

ԴԱՆՈՒՇ. Էս ձեր շները վրէս էնպէս ընկան, որ քիչ մնաց յետ գնամ. լաւ է որ մի

մարդ բակից դուրս եկաւ և քշեց. ո՞ղորմի նրա հօրը, թէ չէ բանս բուրդ էր։ (Նայում է շորերին). էդ բրիւկս նոր եմ առել, առաջիս հագնելն է. լաւ է որ չեն ճղել։

ԻՍԱՅ (զայրով սեղանի մօտ)։ Գա՞լդ էր, գնալդ էր...

ՕԿՍԻՆԱ. Մեր շները չեն կծում, մի վախաց։ Մօտ արի... (մօտենում են սեղանին, նստում են, բացի Դանուշից։ Օրիորդը դարձեալ նրա գիրքն է կարդում։ Իսայ Եակուլիչը երեսը շուռ տված հաշիւներն է նայում)։ Ես շաբաթ ուզում եմ նորահարսներ կանչեմ, կարող ես լաւ կառավարել։

ԴԱՆՈՒՇ (ծոմռվելով). Ինչպէս չէ, ցաւդ տանեմ. ամօթ չէ, ո՞ր օրվայ ենք. անցեալ շաբաթ երեք զօնաղլուղ եմ կառավարել՝ Զաղկալ Գրիշենց, Բըշըմենց, Սատանայ Իսայենց. —էգուց էլ պէտք է կանչեմ Զիգոտերով Պողոսենց համար։ Դուք լսо էգուց չէք կանչում։

ՕԿՍԻՆԱ. Ես ուզում եմ հինգշաբթի կանչեմ։

ԴԱՆՈՒՇ. Հինգշաբթի... (մտածում է)։ Հորեքշաբթի՝ էնտեղ, ուրբաթ՝ նրանց տանը... հինգշաբթի—կարող եմ։

ՕԿՍԻՆԱ. Դու ասում ես Պողոսենք զօնաղլուղ են անում։

ԴԱՆՈՒՇ. Հրամելէք, մեծ զօնաղլուղ է, բառասուն հոգի պէտք է կանչեմ։

ՕԿՍԻՆԱ. Փախլաւայ, նուշով հաց դնում է, թէ չէ։

ԴԱՆՈՒՇ (վատահ). Ի հարկէ, համ փախլաւայ, համ նուշով հաց։

ՕԿՍԻՆԱ. Մուռաբան քանի՞ տեսակ է։

ԴԱՆՈՒՇ. Հոգս տեսակ, լաւ մուռաբաներ՝ զոդալ, ժռիչկ, լիմոն, բաղրանդ։

ՕԿՍԻՆԱ (ամուսնուն). Լսում ես...

ԴԱՆՈՒՇ. Վերջումն էլ ճուկլադ են տալու։

ՕԿՍԻՆԱ. Սա ինչ է, նո՞ր բան է։

ԴԱՆՈՒՇ. Հրամելէք, նոր բան է։ Անցեալ ձմեռ Ալէքսէյ Բողդանիչենք նորահարս կանչան՝ ճուկլադ կար, էս ձմեռ էլ Աստուրենց տանն էլ ճուկլադ էր,—հիմա Պողոսենք էլ ուզում են ճուկլադ տալ։

ՕԿՍԻՆԱ (չհաւատալով)։ Սո՞ւտ ես ասում։

ԴԱՆՈՒՇ. Մեղայ Աստծու, սուտ ինչի պէտք է ասեմ, ամօթ չէ. գլուխս վկայ, ինքս եմ ազաթ արել. չեմ իմանում։

ՕԿՍԻՆԱ. Յետոյ զօնաղներին էլ դու կանչո՞ւր։

ԴԱՆՈՒՇ. Ի հարկէ ես։ Երեսուն տարի է էս գործը ձեռքիս է, պէտք է չիմանամ։

ՄԱՇԱ. Մայրիկ, նա շատ լաւ է կառավարում, մոռացել էր, Լիզայենց տանը ինչպէս լաւ էր կառավարում։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI—1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԴԱՆՈՒԶ (*գլուխ տալով*). Հրամեցէք, հրամեցէք. շատ շնորհակալ եմ։

ՕԿՍԻՆԱ. Ես ուզում եմ հինգշաբթի օրը կանչեմ։ (*Մարդը նեղացած վեր է կենում եւ անցնում է իր սենեակը*)։ Ինչպէս ես կարծում, լաւ չէ։

ԴԱՆՈՒԶ. Շատ լաւ է, շատ լաւ. հինգշաբթի ես էլ կարող եմ։

ՕԿՍԻՆԱ. Ցետոյ ինչպէս կկանչես, ինչ կասես։

ԴԱՆՈՒԶ. Ինչպէս կհրամայէք. ձեր օրհնեալ կամքիցն է կախված։

ՕԿՍԻՆԱ. Ես ինչ եմ իմանում, ինչպէս է ընդունված։

ԴԱՆՈՒԶ. Կասենք՝ Օկսինա Բոդդանովնան շատ բարև արաւ, ասաց որ էսօր կէսօրից յետոյ մի թաս չայի համեցէք...

ՕԿՍԻՆԱ. Չմոռանաս ասել, որ նորահարսներ ունի, հասկացար։

ԴԱՆՈՒԶ. Վայ ինձ համար, ինչպէս չէ։

ՕԿՍԻՆԱ. Պէտք է էնպէս ասես, որ յետ չընկնեն։

ԴԱՆՈՒԶ. Մեղայ Աստծոյ, չեմ իմանում. դուք հանգիստ եղէք, ողջը շատ լաւ կկառավարեմ։

ՕԿՍԻՆԱ. Բայց դու ողջի տունը ճանաչում ես։

ԴԱՆՈՒԶ. Ճանաչում եմ, ճանաչում։

ՕԿՍԻՆԱ. Մի օրում կհասնես, քառասուն հոգի կանչես։

ԴԱՆՈՒԶ, Թէկուզ հարիւր լինի կկանչեմ։

ՕԿՍԻՆԱ. Դէ՜, չմոռանաս. կասես՝ կէսօրից յետ մի թաս չայի, նորահարսներ ունի, հասկացար, կասես՝ որ յետ չընկնեն։

ԴԱՆՈՒԶ. Բարի է։ Հիմա ես գործ չունիմ։

ՕԿՍԻՆԱ. Չէ, հարկաւոր լինի կասեմ։ Բայց թուղթը կպատրաստենք էգուցվան։ Մաշա, էգուցվան կգրես զօնայների անունները։

ԴԱՆՈՒԶ. Ինչի համար էք գրում. հարկաւոր չէ, ինձ բերանացի կասէք։

ՕԿՍԻՆԱ. Ինչու. թղթով խօ լաւ է։

ԴԱՆՈՒԶ. Հրամեցէք, բայց ես գիր չեմ իմանում. դուք միամիտ եղէք. ինձ ձեր աղջիկը կասի՝ ես միտքս կպահեմ։

ՕԿՍԻՆԱ (*կասկածելով*). Կմոռանաս...

ԴԱՆՈՒԶ. Մեղայ Աստուծոյ, ինչի եմ մոռանում, ամօթ չէ, առաջինը խօ՜ չէ...

ՕԿՍԻՆԱ. Հա, լաւ... (*Դանուշը ուզում է գնալ*). Սպասիր, քանի կառնես, ոչինչ չասար։

ԴԱՆՈՒԶ. Աւել չեմ առնիլ։

ՕԿՍԻՆԱ. Էլի—գինդ ասա տեսնեմ։

ԴԱՆՈՒԶ. Ամօթ չէ, հերիք է... (*ուզում է գնալ*)։

ՕԿՍԻՆԱ. Սպասիր, ասա, առանց գնի ինչպէս կլինի։

ԴԱՆՈՒԶ (*զիջանելով*). Քանի տուն պէտք է կանչեմ։

ՕԿՍԻՆԱ. Քսան-հինգ։

ԴԱՆՈՒԶ. Բայց քանի հոգի կլինին։

ՕԿՍԻՆԱ. Շատ չեն՝ քառասուն — կարելի է երեք-հինգ մարդ աւել լինի՝ կարելի է, որ եկող էլ չի լինիր։

ԴԱՆՈՒԶ. Էդ ոչինչ (*մտածելով*)։ Ի՞նչ առնեմ ձեզանից. Ալէքսէյ Բոլդանիչենցից առայ 5 մանէթ...

ՕԿՍԻՆԱ (*ընդհատելով*). Նրանք հարուստ են. նրա զօնաները շատ էին։

ԴԱՆՈՒԶ. Բայց նորահարսներ չունէին... Լաւ, ձեզանից էլ կառնեմ 5 մանէթ։

ՕԿՍԻՆԱ. Թանգ չէ։

ԴԱՆՈՒԶ. Տէրը մի արասցէ, ամօթ չէ. աւել չեմ ուզում, կարգս վկայ։

ՕԿՍԻՆԱ. Դէ, լաւ, էգուց գլուխս կբաշես, իսկ թէ առաջ հարկաւոր եղար, կկանչեմ։

ԴԱՆՈՒԶ. Բարի է։ (*Դանուշը գլուխ է տալիս եւ պատրաստվում է գնալ*)։

ՕԿՍԻՆԱ. Կարծեմ էդպէս լաւ կլինի։ Դանուշ—հէ։

ԴԱՆՈՒԶ. Մեղայ Աստծոյ, ինչի պէտք է

վատ լինի. ես ձեզ համար շատ լաւ կկառավարեմ, այ, կտեսնէք։

ՕԿՍԻՆԱ. Դու շատ ես կառավարել, կիմանաս։

ԴԱՆՈՒԶ. Գլխումս էնքան մազ չկայ, որքան զօնաղլուզ եմ կառավարել։ Կհրամայէք գնամ։

ՕԿՍԻՆԱ. Հէ, բան չկայ էլի։ Ասում եմ՝ որ փողը ծախսում եմ լաւ լինի, ծիծաղի բան չլինի։

ԴԱՆՈՒԶ. Շատ լաւ կլինի... (*Դանուշը գլուխ է տալիս եւ գնում է*)։

ՏԵՍԻԼ Զ.

ՕԿՍԻՆԱ ԲՈԼԴԱՆՈՎՆԱ ԵՒ ՄԱՇԱ

ՕԿՍԻՆԱ. Էս բանից պրծանք։ Մաշա, արի գրիր, տեսնենք ումերին ենք կանչում։

ՄԱՇԱ (*գնում է իր սենեակը թուղթ, մատիտ ներսը*)։

ՕԿՍԻՆԱ (*մենակ*). Էդ բոլորը եղաւ, բայց բանն էն է, որ թասեր չունենք. ումից հիմա ուղենք, չեմ իմանում։ Թաքուշն, եթէ ունենայ՝ կտայ, բայց նրանից չեմ ուզում խնդրել։ (*Նայելով սենեակի պատերին*)։ Էս տեղի համար էլ հարկաւոր է պատի երկու լամպ, մի

հատ էլ ձեռքի է պէտք. իսկ մեր էդ լամպը կընենք Մաշայի սենեակում։ Լիզային պատի լաւ լամպեր ունի, բայց ձեռքի մեծ լամպ չունի... (*մտածում է*)։ Աթոռներս էլ քիչ են։ Քառասուն հոգու համար քիչ-քիչ երեք դիւժին աթոռ պէտք կլայ՝ – բայց մեր աթոռները դիւժին ու կէս են... (*Մաշան մտնում է թղթով եւ մատիտով*)։ Էս բոպէ. Մաշա, նստած իմանում ես ինչ էի մտածում—էդ որ սրանց կանչում ենք՝ ինչի՞ վրա ենք նստացնում – աթոռներ չունենք։

ՄԱՇԱ. Լիզայենցից վեր կառնենք, մայրիկ։

ՕԿՍԻՆԱ. Լիզայենցից լամպեր եմ ուզելու։

ՄԱՇԱ. Դէ, Թաքուշենցից...

ՕԿՍԻՆԱ. Չէ, մեռնեմ, Թաքուշից բան չեմ ուզիլ, ամօթ է. անցեալ շաբաթ զաֆայի սանդը ուզեցի՝ չտուեց—հիմա գնամ էլի խնդրեմ, երես է հարկաւոր... Ինչ խելքի մարդ է Իսայ Եակուլիչը, տան համար ոչինչ չի առնում։

ՄԱՇԱ. Այդ անգամ կարելի է կառնի. սպասիր, մայրիկ, ես խնդրեմ։

ՕԿՍԻՆԱ. Լաւ, ասենք թէ առաւ։ Էլի ուրիշ պակասութիւններ չունենք։

ՄԱՇԱ. Մայրիկ, ինձ համար նոր կապայ չէք կարիլ։

ՕԿՍԻՆԱ. Ինչպէս չէ, անպատճառ, բայց

դրա մասին հօրդ մօտ խօսք չբացես. մենք աղաթի փողերից յետ կդցենք՝ կառնենք։

ՄԱՇԱ. Ինձ համար կապոյտ զոյնի ֆուլեարից կարէք, ինչպիսին որ Կատեան ունի։

ՕԿՍԻՆԱ. Կատեան որ կայ, սև է, նրան կապոյտը սազում է, բայց քեզ չի սազիլ, որովհետև դու ճերմակ ես, քեզ կսազի բաց կարմիր սիւրան... Լաւ, էդ հիմիկվայ խօսելու բան չէ։ Դու այդ թղթի, յետոյ կգրենք, գնա, տես, հայրիկդ ուր գնաց, ինչ է անում, կանչիր, որ էդ բանը վերջացնենք։

ՄԱՇԱ. Նա այն սենեակում նստած լրագիր է կարդում։

ՕԿՍԻՆԱ. Գնա, կանչիր. (*Մաշան թուղթը թողնում է, գնում է*)։

ՏԵՍԻԼ Է.

ՕԿՍԻՆԱ ԲՕԳԴԱՆՈՎՆԱ, ՑԵՏՈՑ ԻՍԱՅ ԵԱԿՈՒԼԻՉ.

ՕԿՍԻՆԱ (*մենակ*). Էս խելքի մարդ է, չի հասկանում... Հասած աղջկան չի տեսնում. ինչ ուզում եմ առնեմ, յետ գցեմ, հենց ասում է՝ յետոյ։ Էդ քիչ է, խեղճի համար փող էլ չի տալիս... Անցեալները Մաթաշը եկել էր լաւ տղայի համար, եթէ հազար մանէթ տար՝ բա-

նը գլուխ կգար։ Ես եղայ, նա եղաւ, էս պատ կպայ, էն պատ կպայ՝ 500 աւել չտուաւ ու չտուաւ... Ի զուր տեղան էն գոզալ տղան ձեռներիցս բաց ընկաւ, գնաց էն Էլիսոկենց չեչոտ բակլային առաւ։ Այ, հիմա էլ երկու ոտը մի մաշիկ է դրել՝ թէ գոնաղլուղը յետ գցիր, ինչ է որ յետոյ մնայ...

ԻՍԱՑ (*մտնելով, խալաթով, թերթը ձեռին, ակնոցները ճակատին բարձրացրած, Մաշան էլ յետևից է գալիս*)։ Հէ, էլի ինչ ես ուզում։

ՕԿՍԻՆԱ. Իսայ Եակուլիչ, էդպէս բան չի լինիը, արի նստիր ասեմ՝ թէ ում եմ կանչում, ինչ պէտք է անենք։ Թողել ես, գնացել ես լրագիր ես կարդում, էդ լրագիրը դուքանում չես կարող կարդաս։ Առաւօտից մինչև իրիկուն քեզ չենք տեսնում, տանն եղած ժամանակդ էլ չես գալիս, որ խօսենք։

ԻՍԱՑ (*ակամայից նստելով*)։ Հը՛, ասա, ինչ ես ասում։

ՕԿՍԻՆԱ. Էդ նորահարսներին որ կանչենք՝ պատի լամպեր չունենք—պէտք է առնես, ողջը մին է, էտ լամպերը յետ ու առաջ պէտք են...

ԻՍԱՑ (*անհամբերութեամբ*). Յետոյ...

ՕԿՍԻՆԱ (*վստահանալով*). Յետոյ չեղա-

ծից մի դիւժին աթոռ է պէտք։ Երկու դիւժին թաս է պէտք։

ԻՍԱՑ. Թասեր միթէ չունենք։

ՕԿՍԻՆԱ. Ունենք, բայց զաֆայի չէ։

ԻՍԱՑ. Զաֆայի թասը ո՞րն է—թասը՝ թաս է էլի։

ՕԿՍԻՆԱ (*վրդովված*). Ի՞նչ խելքի մարդ ես. էն թասերը որ ունենք, թէյի թասեր են։ (*Ամուսինը անհամբերութեան նշաններ է ցոյց տալիս*). Է՛հ, գլուխ չունեմ։ Մաշա՛, ասա, թէ թէյի թասը ո՞րն է՝ զաֆայինը որը...

ՄԱՇԱ. Թէյի թասը, հայրիկ, լինում է բարձր և բերանն էլ նեղ, իսկ զաֆայինը՝ փռված փորով, բերանն էլ լայն։

ԻՍԱՑ. Գրողը տանի ձեզ էլ, ձեր թասերն էլ... (*սկսում է բարկացած մեն գալ*)։

ՄԱՇԱ. Չէ, հայրիկ, ամօթ է. Եղուշենք ինչ են՝ այնտեղ էլ զաֆայի թասեր ունեն, բայց մենք չունենք։

ՕԿՍԻՆԱ. Դու իմանում ես, ինչպէս լաւ պահող եմ, կորած խո՞ չեն էդ բաները։

ԻՍԱՑ. Չեմ տեսնո՞ւմ։

ՕԿՍԻՆԱ. Ինչ է, ոնւտ է ինչ է։ Դու ասենք գին չես անում, բայց ինձ ով տեսնում է աչքը վրաս է մնում։

ԻՍԱՑ. Սոիր, սոիր։

ՕԿՍԻՆԱ. Ինձ պէս կնիկ ճրագով մեն

գաս, չես գտնիլ։ Դու պէտք է ունենայիր Լիլիւշի պէս կնիկ, որ իր ասածը անել տար, էն ժամանակ կիմանայիր։

ԻՍԱՑ. Դու ոչ օրի չես հաւանիլ։ Լիլիւշը քեզանից ինչով է պակաս։

ՕԿՍԻՆԱ. Զատ հաց ուտի, որ ինձ հանի։

ԻՍԱՑ. Լաւ, լաւ, քո ասածն է—ձեռ վեր առ։

ՕԿՍԻՆԱ. Արի, նստիր, ասեմ ինչ է պէտք։

ԻՍԱՑ. (*Ակամայից նստում է*)։

ՕԿՍԻՆԱ. Ամենից առաջ պէտք է տեսնես Վարեօկին և նրան մի մեծ սինի փախլաւայ շինել տաս, նա երկու տեսակ է շինում՝ 3 մանէթ 25 կոպէկանոց և հինգի կէսանոց։ Դու շինել կտաս հինգի կէսանոցը. հասկացար։

ԻՍԱՑ. Ի՞նչ խաբար է. 3 մ. 25-ոցը չի՞ լինիր։

ՕԿՍԻՆԱ. Հասկացիր, 3 մ. 25 ղ. քառասուն հոգուն չի բաւականանալ։

ՄԱՉԱ. Այն օրը Եղուշենց տանը, մայրիկ, 5 մ. 50-ոցն էր։

ՕԿՍԻՆԱ. Յետոյ, 5 ֆունտ նուշ կառնես, լաւը՝ ֆունտը մինչև 40 կոպ.։

ԻՍԱՑ (*Նեղացած*). 5 ֆունտ նուշ ի՞նչ ես անում։

ՕԿՍԻՆԱ. Նուշով հացի համար. նուշով

հացը տանը կպատրաստենք, էդ ծախսից էլ կթեթևանաս։

ԻՍԱՑ. Նուշով հաց չդնես, չի լինիր։

ՕԿՍԻՆԱ (*անհամբեր*). Էլի՞...

ԻՍԱՑ (*ընդհատելով*). Լաւ, դէ՞, փախլաւան չլինի։

ՕԿՍԻՆԱ. Զի կարելի, ինչպէս չես հասկանում, նորահարսներ եմ կանչում—փախլաւայ, նուշով հաց չդնեմ չի կարելի։

ԻՍԱՑ. Տեսար ինչքան բան է, հաւատայ նուշով հաց չլինի, ագռաւները սև կհագնեն։

ՕԿՍԻՆԱ. Լաւ, էս թող—յետոյ կմտնես Գեատերին 5 ֆ. լաւ, երկու նուշով պեչենի շինել կտաս։ (*Ամուսինը վեր է թռնում*)։

ԻՍԱՑ. Սա էլի ինչի՞ համար է։ Թէ փախլաւայ, նուշով հաց ես դնում...

ՕԿՍԻՆԱ. Փախլաւան ջոկ ազաթ կանվի, նուշով հացը և պեչենին միասին շարած՝ ջոկ։

ԻՍԱՑ. Ինչպէ՞ս թէ միասին շարած։

ՕԿՍԻՆԱ (*վրդովված*)։ Դէ, հիմա սա տղամարդու խառնվելու բան է, որ խառնվում ես։ Նուշով հացը և պեչենին միասին կսարքենք մի մատուցարանի վրա, այսպէս՝ առաջ մի հատ նուշով հաց, յետոյ մի հատ պեչենի, յետոյ էլի նուշով հաց՝ էլի պեչենի. հասկացար։ 12 ֆունտ էլ դանազան կանֆետ է պէտք, 5 ֆունտ փուստայ, 4 ֆունտ էլ քաղդի բա-

դամ։ Չէ, գու գլուխ չես հանիլ, աւելի լաւ է փողը տուր, ես ինքս բոլորը կառնեմ։ (*Ամուսինը թողնում է ականջ դնելը եւ գնում է, նստում է սեղանի առաջ ու լրագիրը կարդում*)։ Քանի մտրիս է, Մաշա, ասեմ, էս լամպը կդնես էս սենեակ. էստեղի պատին կը խփենք երկու պատի լամպ. այս սեղանը կդնես քո սենեակը, վրէն կդնես երկու մոմակալ։ Ցետոյ պէտք է լաւ մտիկ անես, որ ողջով լաւ վեր առնեն մուռաբայից, չոր եմիշից. մանաւանդ էն Անեսկին լաւ կնայես. նա շատ քինթամազիցն է։

ՄԱՇԱ. Ինչ էք ասում, մայրիկ, չեմ իմանում. ողջին լաւ կնայեմ։

ՕԿՍԻՆԱ. Լաւ. հիմա գնանք մի բոպէ Լիզային, իսկ գնացողներին կգանք՝ կգրենք։ (*Գնում են ձէջ տեղից*)։

ՏԵՍԻԼ Ը.

ԻՍԱՑ ԵԱԿՈՒԼԻՉ

ԻՍԱՑ (*Մենակ, թողնելով կարդալը եւ յետեւներից ձեռքով արհամարհական շարժում անելով*). Փառք Աստծոյ գնացին. գլուխս ճաքեց. Ասուած ազատի էս կնանիքից. այ,

Յոսան հա՞, այ, տուան առան հա՞... Մարդ երկաթի գլուխ պէտք է ունենայ, որ սրանց հետ խօսել կարողանայ։ Ա՜յ հոգիներ, ոչինչ չեն հասկանում, ոչ մի բան չեն ուզում լսել —թունդ իրենց էշն են քշում՝ գնացողուղ, նորահարս, աթոռներ—այ, զահրումար, հա... Ո՛չ առուտուր, ոչ մի օրինաւոր բան խելքներին չի մտնում։ Մի գան հարցնեն, թէ էսօր ես ինչ եմ արել, երկու մանէթ փող աշխատել եմ, որ էս մառեաքան են սարքում։ Հենց ասում են՝ պէտք է անես, պէտք է առնես՝ էլ չեն ասում թէ որտեղից։ Քիչ-քիչ 40—50 մանէթի ծակ են բացում։ Էդ առաջինը չէ. ամեն ամիս մի բան հնարում են։ Այ, անցեալները կպել էին, որ պէտք է ֆօրտոպիան առնես—գլուխս ծակեցին, էստեղ հասցրին (*ցոյց է տալիս կոկորդը*)։ Վերջը ասացի Մակարիայից կբերեմ, որ ձեռ քաշեցին։ Հիմա էս նորահարսներն են յաւ դառել։ Չեն ասում, որ մենք հասարակ դուքանդարներ ենք, մեզ էդ բաները չեն սազիլ։ Էս չորս նորահարսն էլ ինձ էժան չեն նստել, չորսին էլ խալաթ եմ տուել. էգուց էլօր էլ, էն՝ ինչ է որ ասաց, Գայիւշ է, ինչ ցաւ է, երեխայ կբերի, էլի կասեն, որ ընծայ պէտք է ուղարկել։ Դէ ասա, ինչ որ կաշխատենք՝ խալաթի, ընծաների և գնացողուղների վրա կծախսենք էլի..ը՜, ը՜, ը՜...

(*Թափ է տալիս ձեռքով*)։ Իլա՜ւ էլի... հիմա եկէք էս պահանջներին դիմացէք։ Ցետոյ ասում են, որ հիմիկվան տղերքը չեն պսակվում. շատ լաւ են անում. էդ տեսակ կանանց ու աղջկերքի աչքը էդպէս էլ պէտք է հանեն—թէ չէ՝ շոր, շլեապա, զոնաղլուղ, ֆորտոպիան—այ, յա՜ւ, հա... էդ զոնաղլուղն էլ, որ անում են, մի քեֆն էլ քեֆի նման լինի, ինչ հոգս... թէ չէ՝ գալիս են, մէկ-մէկու նայում են և պապանձված Զաքարիայի նման բերան չեն բացում, խօսք չեն խօսում։ Էդպէս նստում են մինչև դաֆոյի ժամանակը առանց ձայն ծպուտի։ Հենց որ դաֆան խմեցին թէ չէ՝ մին էլ տեսար՝ սագերի նման վիզները բարձրացրին, գլուխները թափ տուին—էհ, ինչ է եղել—լեղուներն է բացվել։ Նոր-նոր մէկ-մէկու առողջութիւն են հարցնում... Էդ զահրումար դաֆան էլ կարծես մեր գինին լինի։ Հա, մոռացայ ասելու, դուք հարցրէք թէ խօսքները ինչ է՝ ֆլանի կինը մարդու հետ չի հաշտվում, ֆստանի աղջիկը երկու տարի է միևնոյն շլեապայով է ման գալիս, Ղաղարի կնիկը հինգ տարի է, որ վերևի բան չի կարել... (*Կանացի ձայնով*) «Մալա՛ջ, ուղիղ է, որ Թաղուլենց հարսանիքին Միկուչի կնիկը խալաթ չի՞ տուել... Վայ, հողը գլխիս, (*ձեռքը երեսին է տանում*) նա տալոջ աղջիկն է

խօ... (*իր ձայնով*)։ Էդպէս ջուրը կծեծեն մինչև աղաթի ժամանակը։ Բայց հենց որ աղաթը վեր առան, ողջով միասին վեր կկենան տուն գնալու—հիմա տեսէք դուրս գալուց ինչ խօսք, ինչ ձայն... երկու ժամ էլ էստեղ կխօսեն՝ կտան, կառնեն—ապա թէ կգնան։ Դէ, ասա՛, օրհնածներ, տանը նստած խօսէիք... Ը՜, (*ձեռքով անում է արհամարհական նշան ղէպի ցած*) տափը գնեմ ձեր պէս կնանիքին... (*սկսում է ման գալ*)։ Զէ՛, էդ չեղաւ, պէտք է մի կերպ էդ զոնաղլուղն էլ հեռացնել, ինչպէս ֆորտոպիանը ցանեցի... Բայց ինչ հնար գնեմ... (*մտածում է*)։ Զէ՛, բան չի դուրս գալ, չեն հաւատալ։ Հա՛, գտայ, գտայ—ես բան չեմ գտնիլ, էս մինը գլուխս չի գովեմ—այ, ինչ կանեմ—սուտան կհիւանդանամ, սրանից լաւ հնար չկայ, բայց կարծեմ գալիս են... նստեմ... (*կարդում է*)։

ՏԵՍԻԼ Թ.

ԻՍԱՑ ԵԱԿՈՒԼԻԶ, ՕԿՍԻՆԱ ԲՕՂԴԱՆՈՎՆԱ և ՄԱՇԱ

ՕԿՍԻՆԱ (*գալիս է մէջ տեղի դռնից, Մաշայի հետ*). Ինչքան բանս եմ թողել, որ գամ քեզ ասեմ...

ԻՍԱՅ (*ընդհատում է*). Էդպէս անժամանակ էլի ինչ բան։

ՕԿՍԻՆԱ. Ինչ է որ, նոր 9-է խփել, մենք էս իրիկուն Մաշայի հետ մինչև 12-ը բան պէտք է անենք։ Ասում ես—մի բանը վերջացնում ես, մի ուրիշն է բացվում. էս բոլէ Լիզան ասաց, որ Վալեոկը հիմա փախլաւայ չի շինում, այլ հիմա շատ լաւ փախլաւայ է շինում, ինչպէս է նա, Մաշա...

ՄԱՇԱ. Աշուղենց հարսը։

ՕԿՍԻՆԱ. Հա, հա, դու էդուց կգնաս նրա մօտ։ Դանուշին էլ կանչեցի, զօնաղներին էլ Լիզայենց տանը գրեցի, որ էս իրիկուն էնա էդ բանը չվերջացնենք...—էլ էդուցվան չմնայ։ Ա՛յ, Իսայ Եակուլիչ, տես ումերին ենք կանչելու... Մաշա, կարդա։

ՄԱՇԱ (*կարդում է*). Նիկոդոսենցից՝ 3 հոգի, Ովսաննայենցից՝ 3։

ՕԿՍԻՆԱ. Լիզայենց Մաշա, չես գրել...

ԻՍԱՅ (*կողմը*). Ը՞. քո Լիզայիդ հէրը անիծած...

ՄԱՇԱ. Ինչպէս չէ, գրել եմ. Լիզայենցից՝ 1 հոգի, Սահակ ապիյենցից՝ 3 հոգի, Սենիւշենցից՝ 4...

ԻՍԱՅ. Սպասիր, դու էդ ասա, էդ զօնաղներից մի երկու շաբաթ յետոյ չես կարող կանչես։

ՕԿՍԻՆԱ. Խելքդ վրադ է, պատրաստութիւնները տեսել եմ, ասում ես՝ թողնեմ։

ԻՍԱՅ. Ի՞նչ պատրաստութիւն ես տեսել, դեռ ոչինչ չի արած։

ՕԿՍԻՆԱ. Դու կարծում ես միայն քո բազարիդ բանն է, երանի չէր լինիր...

ԻՍԱՅ (*ընդհատելով*). Քեզ ասում եմ թողնես՝ լաւ կանես...

ՕԿՍԻՆԱ. Ես քեզ ասացի չի կարելի—մի երկու շաբաթից Գայիւշը երեխայ կբերի, չի գալ—յետոյ պէտք է երկրորդ անգամ կանչեմ...

ԻՍԱՅ (*զարմացած*). Սպասիր, չհասկացայ, ինչ ես ասում, եթէ Գայիւշը չեկաւ, պէտք է էլի կանչես։

ՕԿՍԻՆԱ. Դէ, գլուխս չունեմ, կարծես չես իմանում մեր ադամները, որ էլի հարցնում ես—'ի հարկէ, եթէ չեկաւ, պէտք է գնեմ էլի կանչեմ...

ԻՍԱՅ (*սկսում է տկարանալ*). Օ՛յ, օ՛յ, օ՛յ...

ՕԿՍԻՆԱ }
ՄԱՇԱ } (*խիստ վախեցած*). Ի՞նչ եղաւ, ինչ եղաւ...

ԻՍԱՅ. Օ՛յ, շուտով բժիշկ, բժիշկ..

ՕԿՍԻՆԱ. Մաշա, գնա, տես, եթէ աղախինը եկել է, բժշկի ուղարկիր...

ԻՍԱՅ. Կողքս, մէջքս, գլուխս... (*Մաշան գնում է*)։

ՕԿՍԻՆԱ. Իսայ Եակուլիչ, մի վախեցիր, էս բոպէ բժիշկ կբերեմ։

ԻՍԱՅ. Ես չեմ վախում, բայց քեզ եմ խնայում... օխ, մէջքս... էս ինչ հակառակ ժամանակի պատահեցաւ... Նորահարսներիդ ինչ կանես...

ՕԿՍԻՆԱ. Ոչինչ, ոչինչ, նորահարսներին միշտ կարելի է կանչել—դու միայն առողջացիր։

ԻՍԱՅ (*տնքելով*). Չէ, կանչիր, կանչիր, ոչինչ, ես կկնամ կպառկեմ... օյ, սիրտս...

ՕԿՍԻՆԱ. Ինչ ես ասում, Իսայ Եակուլիչ, մինչև չլաւանաս չեմ կանչիլ։

ՄԱՇԱ (*ներս գալով*). Աղախինը չի եկել, մայրիկ, գնացի Էլիզային, որ ասեմ իր աղախնուն ուղարկէ՝ նա էլ գնացել է Դանուշի ետեւից, դեռ չի եկել։

ԻՍԱՅ. Շուտով տեղերս պատրաստէք։ (*Մայր ու աղջիկ վեր են առնում երկու կողքից եւ տանում են միւս սենեակ, յետոյ Օկսինա Բողդանովնան իսկոյն դուրս է գալիս վրան շալ գցած եւ ուզում է գնալ բժիշկ հրաւիրելու—այդ միջոցին գալիս է Դանուշը*)։

ՕԿՍԻՆԱ (*Տեսնելով Դանուշին*). Գնա, գնա, եկող շաբաթ կգաս, մարդս հիւանդացել է, ղօնաղլուղս մնաց, յետ ընկաւ . . . (*Դանուշը զարմացած մնում է բեմի վրա, Օկսինա Բողդանովնան շտապով դուրս է գնում*)։

ԳԱՐԱԳՈՅԻ.

Հ. Ս. Ս. Հ. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ս. Ս. Հ. Գիտությունների Գրադարան
7/XI—1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԵԿԻԵՋԻՑ.

Բեմի վրա՝ գրասեղան իր պարագաներով, պատի վրա՝ պատկեր։

Գործող անձանց՝ Իսայ Եակուլիչին—բանալիք տոպրակի մէջ փաթաթած, ձեռնափայտ, լաստիր, խալաթ, կապոյտ ակնոցներ, Մաշային—մի թերթ սպիտակ թուղթ, մատիտ, գիրք, Օկսինա Բողդանովնային—շալ։

ՄԵՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

1) ԿՈՏՐՎԱԾ ՍԻՐՏ, *վէպ*, 170 *երես.* . — 40 *կ*
2) ՄԵՌԱԾ ԾՈՎՈՒՄ, *վէպ*, 390 *երես.* 1 *ր.*
3) ԿԵԱՆՔԻ ՊԱՀԱՆՋԸ, *պատմուածք, տպված* 1902 *թ.* Աղբիւր *ամսագրի* №№ 9, 10, 11 *և* 12-*ում*
4) ՀԱՐԱՋԱՏ ԳԾԵՐ . . . . . — 15 *կ.*
5) ՂՕՆԱՂԼՈՒՂՍ ՄՆԱՑ, *վոդ.* 1 *ար. բ. տպ.* 20 *կ.*

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ

55643

ԳԻՆԸ 20 ԿՈՊԷԿ

Գումարով գնողներին զիջումն է լինում։

Գրքի պահեստը՝ Թիֆլիս, Կենտրոնական գրավաճառանոցում։